

մայրի կանոնաւոր զարգացմամբ խոնարհուած բայի մը՝ *esetես յաւելուածէն կրնայ ծագած ըլլալ։ Ուստի եւ երբի համաձայն (*adheses հմտ. ե-ր-ս- *e-dōtesէ) կազմուած է կանոնաւոր կա- տարբերի ձեւը. *երեցի, բէրի։ Աւելի գոտարին է ապաստնոյ ձեւը (*երեցի) մեկնել։ Կրնայ ըլլալ որ ներկայի *eyes վերջնաորութենէն *yes իբր վերջնաորութիւն մը վերցուած ըլլայ. իսկ զի ծա- գուժը շի մէջ փնտռելու է. (հմտ. -ու, վերը, էջ 143)։ Բայց թիւ պատճառաւ փոխանակ ներ- կայի ամբողջ *eyes վերջնաորութիւնն առնելով, առանց յօգականայ ձայնաւորի պարզապէս *yes վերջնաորութիւնն առնուած է։ Արդեօք սո՞մ. կա. ի եւ ստորդասականի սկզբնաբար այն տե- սակ վերջնաորութիւններ յատուկ էին։ Սակայն սպասուի՞ր 1. դէժը յօգականայ ձայնաւորով կազ- մուած է։ Դարձեալ, ըստ իմ տուած մեկնու- թեանս՝ սպասուելու *սէկէ ձեւը՝ որ կանոնին հա- մաձայն փոխուած է -սէի. Արդեօք ներկայի -յի (սիբէր լէէ յառաջ եկած եով. -ալ-յի) եւ կա. ի -ի (սիբէրէ) վերջնաորութեանց ազդեցութեամբը. — Բազմաբար՝ հրւ. հրմ. ձեւը՝ ք-ալ-սէի ձեւին պարզ յոգնականացումն է կրւ. կա. ի ք տառէն յառաջ գրուած = յաւելուածոյ դրով, եզ. ք-ալ- սէի ձեւին մասին վարը պիտի խոսուի։

Չմեջ գրադիցընող և տառին մասին Հիւր- ման Armenische Studien I 89 հետեւեալ դիտո- ղութիւնը գրէ։ «Եռանկիւր ուղ. ի և տառը կա- րելի է չհրգել. esէ յառաջ եկած ենթագրել, վստն զի վերջնաորութեան 3 տառը հայերէնի մէջ կ'իյ- նայ (հմտ. ձայնաւոր արմատներու հր. ուղ. ք, նայնայն բազմաձայն արմատներու եզ. սեւ. ք) իսկ ի սկիւ. -asթի հետ համամատութեան բերուիլը ձայնական օրինակը կը հայաւանի։ Եարդ անուանց ու գերանուանց յգ. ուղ. ի եւ բայերու յգ. 1. եւ 2. գրեցներուն և տառին մասին գոհացողիչ լու- ծում մը տրուած չէ։ Միտ գնելու է, որ ոչ թէ նախնական 3 գիրը, այլ նախնական 8-ն հայերէնի մէջ ի կրնար փոխուած ըլլալ... Եզ. գործիա- կանի ի = ք վերջնաորութիւնը՝ ըստ ամենայնի սկիւ. -dhes վերջնաորութեան կը համապատասխանէ. ի հարկի նս վերջնաորութիւնը պէտք էր իյնալ։» Հմտ. անգ. դարձեալ էջ 95։ Այս գիտողութիւնը իրեղեւոր նաեւ Բուզգէ Beitrage zur etymologie Erläuterung d. arm. Sprache. p. 43. Բուզգէ մեր քննութեան նիւթ եղած ձեւերուն և տառը -8-ն ծագած կ'ընդունի։ Ենթադրուի, ժա- մանական հղովմանց վրայ *ն մասնիկ մը կրնար կցուած ըլլալ. այս մասնիկն անշուշտ իրեն հե- տեւորով ձայնաւորով սկսող բառի պատճառաւ և ձայնը՝ փիտեմ եւ այնուհետեւ այս վերջին ձեւն ընդհանրացած ըլլաւ։ Եւ այս ենթագործիւնը օսական շատ հաւանական չէ։ Ինչու որ, ինչ պատ- ճառաւ և մասնիկը միայն -8 վերջնաորող հղով- մանց վրայ պիտի կցուի եւ ոչ նաեւ միւսներուն։ Չայնաւորներէ յառաջ -ն ձեւին ընդհանրանալն եւս շատ զարմանալի է։ Այսու հանդերձ Բուզ- ման Grundriss II 660 Բուզգէի այս են- թագորութիւնը «մատգործեան արժանի» կը համարի։

Առի մեզի գեղեցիկ օրինակ մըն է, թէ եր- բեմն որչափ գոտարին է ուղղել պարզ ինդիք մը, որ ի սկզբան թիւր ըմբռնուած է։ Բարբողմէ Studien II 184 կ'երեւալ թէ Բուզգէի տուած մեկնութեան անոքը ըլլալն զգացած ըլլալով, կը շանայ յօգնակերտ և տառը -8-ն յետագա մասնիկ մեկնել, որմէ ձեւացած ըլլալու էին հաւաքականը, Սակայն այս պարագային մէջ ի մտնել գտնուող, վերջնութիւնը վանկին ձայնաւորը չէր կրնար ինկած ըլլալ։ և տառին ետեւ ձայնաւոր մը չգոտարելուն կ'երաշխտուէր ի մէջ այլոց անշնչ-ն ձեւը. վարը պիտի տեսնէր թէ -ն մասնիկը՝ վերջավանկի ձայնաւորներուն կորստենէն յառաջ (բայց բազա- ձայն վերջնատառերու օրէնքէն ետքը) տեղի ունե- ցած է։ Դարձեալ չորս-ս, ինչպէս նաեւ նշի-թասակ իւր նախնական վերջավանիք պահած է (հմտ. չորս, նշի-թ). տ. Թէյէ MSL. IX 157.

(Հարմարեցնել)

չ

ՊԱՅՄԱՆԱՆ

ԵԳԻՍԵՐԵԹՈՐԳՈՒՄՈՍ ԵՂԳՈՒՆԵՐ ՄԻՋԵՄՈՒՑ
ՎԵՂԸՆ ՀՈՍ ԵԳՐՍԻԳՈՒՄԻԹԵՆ ՎԵՐՄԵՆ-
ԲԱԳՈՒԹԵՆԸ ՀՈՍՈՐ։

(Հարմարեցնել)

Բ. Եր համարձակելու յառաջ բերել պատճառներն ալ՝ որոնք հայ եպիսկոպոսու- թեան վերանորոգութեան անհրաժեշտ հար- կաւորութիւնը կը ճշմարտեն։

Ստորգ է, մեր հաւատքն այն կաթողիկէ հաւատքն է, որ ամեն ուղղափառ ազգայնու- թեանց յատուկ է։ Բայց քրիստոնէութեան սկզբնաւորութենէն թէպէտ հաւատքի մէջ միացեալ, սակայն միջո, ընդհանուր եկեղեցւոյն մէկ առանձինն կեցած կարգը կը կացուցանէր ու կը կացուցանէ հիմակ ալ մեր եկեղեցին։ Ինչու որ իր սատուածային պաշտամունքը — թէ յառնականն ու թէ լատինականն տար- բերող — հայ արարողութեամբ՝ հայերէն լե- զուով կը կատարէ։

Միայն աս զատ, աս տարբեր եկեղեցին պահեց հայ ազգին լեզուն մինչեւ ցայսօր, իրեն հին հայրենիքն մէջ, երբ քաղաքային անկա- խութիւնը կորսնցընելէն ետեւ՝ օտար իշխանու- թեանց բռնութեանը տակ ինկաւ։

Աս յատուկ եկեղեցին պահպանեց հայե- լեն լեզուն՝ մեր — հին հայրենիքէն, դարերով դուրս գաղղթած — նախնիներուն մէջ ալ։ Ու- սու մասնակուր եկեղեցին կանգուն կը կենալ գեւ-

այսօր ալ: — Եւ արգելք, այս մեր — շատ հին հաւատքին սահմանադրութեան փճանալուն առջեւն առնելը՝ մեր ամենասուրբ պարտաւորութիւնը չէ: — Այո՛, հազարամեայ աւանդութիւնը կը սրբացընէ այս իրաւունքը: Եւ կուզենք որ զանկալ մեր թողունքուն, մեր ժառանգներուն ալ անփաստ հասցընենք:

Բայց աս բանն ան ասին միայն կրնանք ընել, երբ հայածէս եպիսկոպոսութիւնը կը վերականգնուի՝ իրրեւ մեր պահպանութեանը մի միայն ու եական թելութիւնը: Ինչու որ մինչեւ հիմակ եղած առժամանակայ եկեղեցական վարչութեան տակ — առանց անոր ուղելուն — հայ եկեղեցւոյն վրայ կործանում եւ փճացում կը սպառնացուի: Աս եկեղեցական վարչութիւնը՝ շճանշանով մեր լեզուն ու մեր ծէսը՝ չի կրնար ի վիճակի ըլլալ, որ հայ եկեղեցւոյն վրայ, եկեղեցական վերին իշխանութիւն բանեցընէ, անակ կերպով մը՝ որ հին սահմանադրութիւններն առանց փնասու պահուին, եւ զատ զատ եկեղեցական հասարակութիւններու մէջ, ծիսի եւ արարողութեան միութիւնը պահպանուի: — Եւ ստուգիւ հայ եպիսկոպոսութիւն չըլլալուն, արդէն իսկ աշգիւ զարնող բանն է ան փնասաբեր հետեւութիւնը, որ որչափ հայ ժողովրդականութիւն կայ տէրութեան մէջ, գրեթէ այնչափ տեսակ է արարողութիւնը: — Ասոր պատճառն ան է, որ զծէսն ու լեզուն ճանչցող եկեղեցական աւաջներդ մը չկայ, որ իրրեւ միացնող կապ՝ ծառայէ. ու հակէ որ ամէն տեղ միակերպ — առանց փոփոխութեան մէջ հայ արարողութիւնը. — ու որ կարենայ հաւատացելոց քահանաներ կարգել: Որովհետեւ, ինչպէս յայտնի է, լատինածէս եպիսկոպոս, հայածէս քահանաներ ձեռնադրել չկանալով՝ հարկ է որ ասանք՝ Հոգով, Անետիկ, ղիննալ կամ Վեմպերկ երթան՝ իրենք զիրենք ձեռնադրել տալու համար:

Ասկից, ալ աւելի ցաւալին — եւ ապագան նկատելով աւելի վտանգաւոր պարագան ան է, որ որովհետեւ ազգայնոց սղեղնական քաղաքներէն, ժողովրդեան մէկ մասը՝ տերութեան գննադատ քաղաքներն ու տեղերը գաղթած է, ու հիմակ ալ օր աւուր վրայ կը գաղթէ. չըլլալով հայ եպիսկոպոս, որ իրեն պարտք համարի հոգ տանիլ, որ նոր ժողովրդագրականութիւններ կանգնուին — ան դուրս գաղթած հայերն իրապէս իրենց հայ ծէսը թող տալու պարտաւորուած են. վասն զի չու-

նին հայածէս քահանայ: Ուստի եւ այն տեղի լատինածէս քահանային իրաւասութեանը տակ ինկած են ու կ'իյնան: Ուսկից ան հետեւեցաւ, որ արդէն հիմակ, ամենէն քիչ՝ այնչափ հայածէս ուղղափառ կաթողիկէական հայ կայ մեր տէրութեանը մէջ՝ լատին արարողութեան իրաւասութեանը ներքեւ, որչափ որ փնացած է հայ ժողովրդագրականութեանց մէջ՝ իրենց յատուկ քահանաներու տակ: — Աս՝ ասանկ շարունակուելով՝ դժուարին չէ հաշուել, ապագայ ժամանակն, որուն մէջ հայ ծէսը պիտի ջնջուի եւ լատինականին մէջ պիտի ձուլուի: — Հայ ուղղափառ եկեղեցւոյն՝ մեր տէրութեան մէջ վախճանիլն, այս կերպով յառաջունեն մեր աշուրներով տեսնելով, պարտական ենք անոր առջեւն առնելու համար ամէն միջոց բանեցընել: Եւ համոզուած ենք, որ երբ ամէն ազգութիւն, չէ թէ միայն կրօնի, հապա նաեւ քաղաքային իրաւունքներ կը ինչդէ իրեն համար, եւ զանոնք ընդարձակելու կը ձգտի — մենք, որ ամէն պարագաներու մէջ, աղէկ ու դժբախտ պարագաներու, հնազոյն եւ նոր փորձութեանց եւ արկածներու ժամանակը գահին եւ տէրութեան սրտանց ունեցած հաւատարմութիւնիս ճշմարտեցնին եւ պահեցնին. մենք՝ որ սահմանադրական իրաւանց վայելումներ՝ հասարակաց ազատութիւնը՝ տէրութեան օրինացն սնվեալ պահպանութեանը մէջ կը տեսնենք ապահովուած — ու մենք՝ որոնք՝ եւ ոչ մեր մարին ծայրին անցուցած ենք երբեք, քաղաքական կերպով՝ ուրիշ ազգայնութիւն մը կերպարանելու բաղձը, հապա մեր սրտին խորքէն կը կապուինք 1791ին, Դրանսիականիդ տէրութեան աւագաժողովին ԿԱ. յօդուածին ոգւոյն, որուն համեմատ կ'ուզենք հունգարական տէրութեան վերաբերիլ — չենք կրնար անանկ ապերշնիկ ըլլալ, որ միայն եւ միայն մեզի զաւգուի, մեր յատուկ եպիսկոպոսութեան վերականգնումը: Եւ մեր հայրենասիրութեան պարտաւորութեան հաւատարմով ըլլալուն, իրրեւ վարձք, անով պատժուինք, որ կամաւորապէս քաղաքական կերպով հունգարական աղբին անդամներն ըլլալուն — այն միջոցին, որ ուրիշ ազգայնութիւնները զատ քաղաքական իրաւունքներ կը ստանան — մենք նոյն իսկ մեր վաղմիծ սահմանադրութեան պահպանութենէն ալ իյնանք, զրկուինք, եւ մեր հազարամեայ ծիսին մշտնջենապէս փճանալուն խափանիլը՝ եւ ոչ մեր սահմանադրական կառավարութեան պաշտպանութենէն կարենանք ընդունիլ: — Աս բանն չենք

կրնար երեւակայել, եմթադրել, — Ուստի վստահութեամբ կը յուսանք, որ մեծապատիւ հունգարական թագաւորական պաշտօնարանն ի նկատի առնելով՝ մեր յառաջ բերած պատճառները՝ մեր աղաչանաց ընդունելութեանը համար, կը բարեհաճի մեզի թիկուելը ըլլալ:

Գ. Կը համարձակինք յառաջ բերելու ան պարագան ալ, որ հայ եպիսկոպոսութիւնն առանց հասութի (dotatio) չի կրնար վերականգնուիլ: Իսկ կառավարութեանն ընդունելի եկամտին մէջ օրինաւոր իրաւունք ունինք:

Ալէկ գիտե՞ք, եւ բոլոր տէրութեանն առջեւն ալ գիտցուած լան է, որ մենք՝ մեզի թող տրուած ըլլալով՝ միայն մեր գորութեամբ՝ եպիսկոպոսութիւնը կանգուն պահելու ի վիճակի չենք: Բէկ կողմանէ, անոր համար, վասն զի հայածէն հիմնարկութիւնը՝ միայն կաթուղիէնական հայերու հաշուին եւ Ժանարեանութեանը վրայ պաշտօններն՝ տեւական ապահովութիւն չ'երաշխարհորէր: Բէկալ կողմանէ անոր համար վասն զի յոյս ալ չկայ, որ այս ծամբով հարկաւոր եղած գրամը կարենայ հուգացուիլ, որովհետեւ հաւատացելոց մեծ մասն աղքատ է, ու իրենց թիւը նուազ: — Ուստի ամենախնարհ մեծարանք, յայտնապէս ըսելու պարտաւորուած ենք, որ հայ եպիսկոպոսութեան վերանորոգութեամբը, պէտք է որ նաեւ անոր եկամտին համար աղաչենք: Որովհետեւ հայ եպիսկոպոսութեան վերականգնումը շնորհել, առանց եկամտի՝ եւ եկամուտը՝ հայ ժողովրդեան հաւատացելոց վրայ դնել, կը նշանակէ, նոյն իսկ սկիզբը ընդգունել: Ինչու որ յայտնի է թէ հաւատացելոց գորութիւնն ի վիճակի չէ հարկաւոր հասցնելու հոգալու:

Ուստի, ինչպէս որ օրինի կրօններն ու եկեղեցական հասարակութիւնները՝ տէրութեան հասութին մասնակից կ'ըլլան, հայ կաթուղիէականներն ալ, արժանապէս կրնան հետամուտ ըլլալ ու պահանջել այն բանը: Ինչու որ ազգայինքն համեմատութեամբ՝ երկրին հարբատութեան, ճշգիւ այնպէս օգնութիւն կը մատուցանենք, ինչպէս ուրիշները: Եւ մեր թուին նուազութիւնը նկատելով — մանաւանդ անով որ միաժողովականութիւն կ'ընենք — անտարաժյոյս այն չափով կը մասնակցենք, որ արժանի ըլլանք խորրած հասցոյն ընդունելու: — Հանգերէ այսու, թուին նուազութիւնը՝ չի կրնար պատճառ տալ ու առիթ ըլլալ, որ, ասոր համար եպիսկոպոսութիւնն ու անոր եկամուտը մեզի զլացուի — հապա մանաւանդ ի նպատակ անոր՝

որ իբրեւ տկարագոյններ, պաշտպանութեան արժանանանք: Այնչափ աւելի՞ որչափ որ օրենքը՝ իրականց հաւատարկութիւնը, չէ՞ թէ ժողովրդեան բազմութեանը համեմատ կը բաշխէ: Հապա սահմանադրութեան ճիշդ իմաստն ան է, որ առանց տարբերութեան տարածէ ու սփռէ տէրութիւնը՝ օրինաց վրայ հիմնուած հաւատարկութիւնն, ամէն եկեղեցական հասարակութիւններու վրայ:

Գալով հասութին որբանութեանը՝ մենք, որոշեալ գումարի մը վրայոյ չենք ուզեր խօսիլ կամ բանակցիլ, վասն զի հաշիւ չենք ընել մեծ եկամուտի մը: Մեր խոհական փափաքն ան է, որ եպիսկոպոսին, ինչպէս եկեղեցւոյ մը գլխոյ վիճակին ու աստիճանին համապատասխանէ — որպէս զի անպատճառ եղած էլ չ'երբ ծածկուած ըլլան: — Աս բանն ամենապատիւ հունգարական — թագաւորական պաշտօնարանին յանձնարարութեամբը՝ տէրութեանն եւ մեծափառ վեհապետին իրաւամբ կրնանք յուսալ:

Գ. Երբ մենք՝ մեր խոնարհ աղաչանքովն, ազգային եկեղեցւոյն միացեալ ինքնակացութեանը ապահովութեանը կ'աշխատինք — չենք կրնար չայայտել զան ալ, որ մենք ամենեւին չենք ուզեր, որ մէկալ եկեղեցական հասարակութեանց հայ կաթուղիէ հաւատացեալներուն անձնական ինքնակացութիւնը սեղմուի: Բայց մէկալ կողմանէ ալ, չենք կրնար թողուլ, որ առանց մեր ուզելուն եւ առանց մեր միջամտութեանը, կարենան ընել անանկ կարգադրութիւններ, որոնք բոլոր հայ ծիսին ընդհանրական խորհրդին հարկաւոր է:

Ուստի խոնարհ մեծարանք, զան ալ կը խնդրենք, որ հայ եպիսկոպոսութեան նորէն վերականգնուելով՝ բարեհաճի մեծապատիւ հունգարական պաշտօնարանը, միանգամայն հայածէս խառն՝ եկեղեցական եւ աշխարհական ժողով մը գումարել, որ ամէն հայ եպիսկոպոսութեան վերանորոգութեանը նմա կապակցութիւն ունեցող խնդրին եւ ընելիքին վրայոյ, նախապէս ընդհանուր ժողով մը գումարէ: Եւ առ հասարակաց միաբանութեամբ հաստատելիքները վաւերացնելու համար, վերին իշխանութեան ներկայացրէ: Այս ծամբով միայն կրնայ, երբայրական միաբանութեամբ ապահովուիլ, թէ ընդհանուր հայ եկեղեցւոյն անկախութիւնն եւ իրաւունքները, եւ թէ միանգամայն մէկալ եկեղեցներուն ինքնակացութիւնը

Ամենապատիւ հունգարական-թագաւորական կրօնի եւ համակրութեան պաշտօնա-

բան, Մենք օրինաւոր արդարութիւն կ'ուզենք, ու զատիկայ օրինաց վրայ հսկող պատասխանատու պաշտօնաւարներն հայրասէր միջնորդութենէ կը սպասենք: Եւ մեր ներքին համագմանը համեմատ՝ մեր արգարացի պատճառները նկատելով՝ ամենայն փտահոութեամբ նշոյները փաստելու կը յուսանք:

Մենք՝ Վեհափառական հին սպահովացուցման կատարումը կը սպասենք: Եւ ասոր նկատմամբ, մեր վեհափառ Տիրոջ, մեր թագաւորին հայրական զթութեանը վրայ տարակուսելու վախ չենք կրնար ունենալ, — որուն՝ անմահ յիշատակաց արժանի նախորդներն՝ իրենց ժողովդոցը երջանկութիւնը՝ միշտ իրենց աչքին առջեւ ունեցած են:

Մենք՝ հաշիւ կ'ընենք, մեր ժամանակին իրաւաց հաւասարութեան վրայ եւ ասկէ — սահմանադրական իշխանութեան եւ հունգարական ազգին անդդուելի կերպով յարող հայ կաթողիկէական հայրենակիցները — սահմանադրական կառավարութիւնը չի կրնար մերժել:

Անոր համար մեր խնդիրը, մեր աղաչանքը՝ լի փտահոութեամբ կը ներկայացընենք ամենապատիւ հունգարական-թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնաւարներին, — որ ենք, խորին մեծարանքով

Եղիսաբեթուպոլիս՝ 1868 ապրիլ 7.

խոնարհ ծառաներ

Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին հասարակութիւնը:

Եղիսաբեթուպոլսոյ քաղաքապետն՝ աս աղերսագրէն օրինակ մը յաջորդ ներփակածով Եւրոպի քաղաքային հասարակութեան խրկեց:

“Մեծարոյ քաղաքային Հասարակութիւն՝ Պատուական եղբայրք ու բարեկամք:

Դրանսիլուանիոյ հայածէս եպիսկոպոսութեան վերանորոգութեանը նիւթին նկատմամբ, ամենապատիւ կրօնի եւ համակրթութեան պաշտօնաւարներն գրած աղերսագրին ընդօրինակութիւնը ներփակելով, ան պատճառաւ կը հաղորդենք Հրամանոցդ, որ ասկէ իմանալով մեր տեսութիւնը՝ դիտած նպատակին հասնելու համար՝ այնչափ հարկաւոր միաձայնութեամբ կարենանք գործել եւ ընելիքնիս ընել: — Այլ յայտնենք ան ալ, որ ամենապատիւ պաշտօնէից մէկի մէկին, նմանօրինակ աղերսագրերնք պիտի գրենք: — Գալուշայի եւ Վիեննայի հայածէս արքեպիսկոպոսին — ինչպէս նաեւ Դրանսի-

լուանիոյ լատինածէս եպիսկոպոսին ալ աղաչեցինք, որ հարկաւոր եղած տեղերը՝ մեզի պաշտպանութիւն ընեն: — Վերջապէս մէկ քանի տերութեան ժողովոյն երեսփոխան ալ — որոնք՝ Եղիսաբեթուպոլսոյ բարեկամաց կարգը կրնանք դասել — աս նիւթին մէջ խնդրեցինք: — Չեզմէ կը կանուխ, աս բանիս մէջ, Չեր յատուկ տեսութեանը համեմատ ընել, ան ամեն բան, ինչ որ հարկաւոր կը տեսնէք:

Մեծարանք ենք, քաղաքային Հասարակութեանդ, Եղիսաբեթուպոլիս 1868 ապրիլ 7,

անկեղծ բարեկամներ

էջմիշ. Վարդապետեան յ. ձ.

գլխաւոր դատաւոր:

Անդրոն Լաւրէնթի յ. ձ.

քարտուղար:

Չէ թէ միայն Եղիսաբեթուպոլսոյ՝ այլ նաեւ Եւրոպի եւ ուրիշ հայ հասարակութեանց, Եւրօի պաշտօնէին... եւ նոյն իսկ նորին վեհափառութեանը գրած աղաչանքներն անպատասխանի մնացին: — Պաշտօնաւարանը՝ հայ հասարակութեանց նամակները, լատին եպիսկոպոսներուն խրկեց, որպէս զի ասոր նկատմամբ իրենց կարծիքը տան: — Ասնք՝ առանց բացառութեան՝ ամենքն, աննպատասխոր պատասխան ու կարծիք տուին: — Նորին վեհափառութիւնն, ինչպէս կը կարծուէր, թեպէտ եւ բոլորովին օտար չէր, հայ եպիսկոպոսութեան վերականգնուելուն գաղափարէն, բայց առանց իր պաշտօնէից չուզեց բան մ'ընել: Իսկ ասոնք՝ ինչպէս յայտնի է, բոլորովին հակառակ էին հայ եպիսկոպոսութեան:

Աս տողերը գրողն ալ իր ժամանակին մեծ մարդու մ'ընկերութեամբ, համակրթութեան պաշտօնէին ներկայացաւ: Բայց ինչպէս կը կուսէինք, պաշտօնեայն հայ եպիսկոպոսութեան մը չիմուելուն շատ միտեալ չէր: Զանազան խօսակցութեանց մէջ, երբ որ յիշեցուցինք, թէ վերջին ատենները՝ Պոնտիայի մէջ նոր եպիսկոպոսութիւններ հաստատուեցան... թէ ամէն կրօնական կուսակցութիւն ունի իր յատուկ եկեղեցական առաջնորդը ու հրեայք անգամ իրենց գլխաւոր բարբին. եւ թէ միայն մենք զգուշացնենք այն նորհրդէն, որ չունենանք եկեղեցական առաջնորդ մը, գրուի մը, զարմանալով մ'ըլաւ. “Անիք եկեղեցական առաջնորդ: Հին է Դրանսիլուանիոյ եպիսկոպոսը:”

(Էւրաւսիսի)

ՅՈՎՀ. ԱՆՏՅՈՒ

